

# Ապարաժ

Յիմնադրված է 1991 թվականին: 13 (397) 17-31 հուլիս, 2016թ.



ԵՐԿԾԱՐԱՋԱՌԱՑԵՐ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

[www.aparaj.am](http://www.aparaj.am)

## Խմբագրական

### Խնդիր կա, բայց լուծման ձեւը սա չէ

Արդեն շատ է խոսվել եւ գրվել «Սասևա ծոերի»՝ հուլիսի 17-ի գործողությունից հետո Երեւանում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Մի բան շատ պարզ է՝ չկան «կողմեր». արիեստականորեն ստեղծված «կողմերը» դեպքերի հանգուցալութումից հետո արդեն ափսոսում են:

«Դադարձը» փոշմանել է արածի եւ չարածի համար, իսկ «պարտվողը» նույնպես փոշմանած է դուրս եկել չարածի եւ արածի համար:

Իրադարձությունների կապակցությամբ ՀՅԴ-ն հենց առաջին օրերին հնչեցրել է իր հստակ տեսակետը՝ խնդիր կա, բայց լուծման ձեւը սա չէ:

Ոչ ոք չի կարող հերքել Դաշնակցության գումարտակի ունեցած վաստակը՝ դարաբաշյան պատերազմի օրերին, սակայն Ժիրոն եւ իրեն համակրող տղաները եղել են այն հազարավոր դաշնակցական եւ համակիր տղաներից, որոնք ծառայել են Դաշնակցության դրոշի ներք եւ ովքեր կերտել են Շուշիի առանձնակի գումարտակի փառքը:

Այս ժամանակ չեին ուզում նշել Դաշնակցության անունը, քանի որ Դայաստանի օրվա հշիսանությունները չեին հանդուրժում Դաշնակցությանը, իսկ իմաստի գովոր ու փառաբանությունը հենց այն մարդիկ են, ովքեր ժամանակին են այն շպրտում Դաշնակցության գումարտակի վրա՝ հնչեցնելով անհետեթ մեղադրանքներ:

Դաշնակցությունից հեռացան շատերը, հեռացան կուսակցության կարգ ու կանոնին չենթարկվող, անձնական փառքի հետեւից ընկնող մարդիկ: Երբ այդ մարդիկ մտան քաղաքական դաշտ, դարձան առաջնորդներ, օգտագործվեցին Դաշնակցությանը մեղադրելու համար:

Ահաբեկչությունը նախ եւ առաջ քաղաքական ակտ է, սակայն իր մեջ ունի բարոյական եւ անբարոյական դրսեւրումներ: Երբ Դաշնակցության որոշմամբ ահաբեկչության միջոցով գետնին է տապալվում Թալիաթը, ոչ ոք չի կարող այդ ակտը համարել անբարոյական: Ակբարոյական է վախճառ, չթիրախավորված, անմեղ կյանքեր խրոյ եւ ահ ու սարսափ առաջացնող կույր ահաբեկչությունը: Սա Դաշնակցության ոճը չէ:

Այս օրերին հիշվեց Բանկ Օտտոմանն ու Լիզբոնը, փորձեց մեղադրել ՀՅԴ-ին եւ Դաշնակցության ձեռագիրը գտնել հուլիսի 17-ին տեղի ունեցածի մեջ:

Երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը անօրինական ճանաչեց Դաշնակցության գործունեությունը՝ Դայաստանում, ՀՅԴ-ն շատ առիթներ ուներ գենքով հարցել լուծելու:

1992 թվականին, երբ Դայաստանի հշիսանությունների կողմից «persona non grada» հայտարարվեց ՀՅԴ Բյուրոյի օրվա ներկայացուցիչ Յարյու Մարուխյանը, այդ լարված օրերին նա սփյուռքի դարձալ համագործակցության ձեռք մեկնեց գործող հշիսանության՝ խուսափելով լարվածությունից եւ արյունահետությունից: Դա է դաշնակցականի սկզբունքայնությունը:

Դիշենք ընկեր Յարյու Մարուխյանի խոսքերը.

«Դա թեղափոխական Դաշնակցությունը յայտարած է եւ յայտարարում է նաև այսօր, որ իր ամբողջ կարելիութիւններով ինքն իրան դնում է Դայաստանի հշիսանութիւնների տրամադրութեան տակ, բայց ոչ յէ Դայաստանի հշիսանութիւնների գրապահն մէջ, մեր կազմակերպութեան հարիւրամեայ փորձառութեամբ՝ քաղաքական, տեսական, ինչ ձեռով կ'ուղեց մօտեցեք, եւ մասնաւո՞ն մարտական...»:



### Արմեն Ռուստամյան. «Որեւէ հաշվեհարդար չպետք է իրականացվի այդ անձանց նկատմամբ»

ՀՅԴ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը մեկնարարների կողմից գենքը վայր դնելու որոշումն ու քաղաքական ստեղծված իրավիճակը:

«Մենք ողջունում ենք հանձնվելու մասին գինված խմբի որոշումը, քանի որ դա միակ ճանապարհն էր նոր գոհերից խուսափելու եւ արյունահետությունը բացառելու համար: Եվ, բնականաբար, մեր հիմնական հարցն այն էր, որ կարողանայինք հենց այս հանգուցայութմանը հասնել: Ես դա համարում եմ նաև 2 կողմերի ողջախոհության արդյունք, որովհետեւ այն, ինչ հշիսանությունները համբերատարությամբ արեցին՝ հետեւելով գործնթացին, սույն ապաստեց դրան, նաեւ այն այս ամենը կարող է բերել նոր գոհերի, ոչ մի բան ավելին չարժե, քան այն, որ կանխվել նոր զոհաբերությունները եւ արյունահետությունը: Սա իսկապես գնահատելի է, եւ այս իրավիճակում, բնականաբար, գլխավոր հարցը մնում է հետեւյալը. մնացած առօւնենուկ գործնթացը պետք է տեղի ունենալ:

այս տրամաբանությամբ, որի մասին մենք հայտարարել ենք: Որեւէ հաշվեհարդար չպետք է իրականացվի այդ անձանց նկատմամբ: Մենք պետք է հետեւենք, եւ հասարակությունն էլ դա պետք է անի, որ իսկապես օրինական եւ ամենամեղմ տրամաբանությամբ մեղադրանքները, որ ներկայացվելու են՝ կապված որոշակի հանցագործությունների հետ, որոնք անհերթելի են, բայց մնացած խնդիրները, որոնք թույլ են տալիս, նաեւ օրենսդրությունն է թույլ տալիս, որ ամենամեղմ կերպով վերաբերվեն կատարվածին:

Միեւնույն ժամանակ հասկանում ենք, որ, բնականաբար, այս պատճառները, որոնք այդ մարդկանց հասցեն են այդպիսի հուսահատ քայլի, հասարակության մեջ խոր արմատներ ունենալու պահանջում են, դրանը պետք է օր առաջ վերացնել, պետք է ամեն ինչ անել, որպեսզի մեր երկրում այս աստիճանի դժգոհությունները պակասեն եւ վերանան:

Դա համար մտածված քայլեր են անհրաժեշտ: Ընդունելով այս դժգոհությունը վերացնելու բոլոր մոտեցումներն ու հնարավորությունները եւ մեզ շեղել մեր ընդհանուր ազգային պետական նպատկներից:

Սակայն դա համար պետք է տքնածական աշխատանք, գիտակցված մոտեցում: Մարդիկ, ովքեր դա կարող են անել, այդ գործին պետք է լծվեն: Սա իսկապես մեզ բոլորին պետք է դա լինի, որ օր առաջ մեր երկրում հաստատենք այսպիսի կարգեր, այսպիսի համակարգ, որ ոչ ոքի մտքով չանցնի, որ կարող է ոտնահարել իրավունքի հարցը հարցությունների կողմէն առաջարկություններում մենք ընդունում այն ճանապարհը, որը

### Սահմանադրական բարեփոխումների ընթացքն Արցախում



Հուլիսի 25-ին Ազգային ժողովում ԼՂՀ նախագահին կից սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնենությամբ կազմակերպվել են սահմանադրական բարեփոխումների հայցակարգի շուրջ առաջին հարցին հարցային քննարկան մասնապարհը, որը

Կարդացեք 3-րդ էջում

### Արցախի հարցը հոդային հարց չէ, այլ՝ Արցախի ժողովրդի կյանքի եւ մահվան հարց



Զարօյա պատերազմի եւ դրան հաջորդած իրադարձությունների, ինչպես նաև Արցախի հարցի ուղղականացման համար կողմից իրականացվող աշխատանքների մասին «Ապարաժ»-ը գրուցել է Գասպար Կարապետյանին հետ:

Կարդացեք 4-րդ էջում





Արցախի հարցը հողային հարց չէ, այլ Արցախի ժողովրդի կյանքի եւ մահվան հարց

Թաղորյա պատերազմի եւ դրան հացորդած իրադարձությունների, ինչպես նաև Արցախի հարցի ուղղությամբ ՀՅԴ Եվրոպայի Յայ Դատի գրասենյակի կողմից իրականացվող աշխատանքների մասին «Ապառաժ»-ը գրուցել է ՀՅԴ Եվրոպայի Յայ Դատի գրասենյակի պատասխանատու Գասպար Կարապետյանի հետ:

- Ի՞նչ ազդեցություն ունեցավ Հայ Դատի աշխատանքների վրա Արցախյան քառօրյա պատերազմը, եւ արդյո՞ք այն որեւէ կերպ փոխել է ձեր աշխատանքների ուղղությունը:

- Հաշվի առնելով Վկիեւի վարած քա-  
ղաքականությունը Եւ Նրա կատարած  
հայտարարությունները՝ բոլորս Էլ սպա-  
սում էինք, որ մի օր պիտի կատարվեր  
այս, ինչ եղավ: Անշուշտ, առաջին պա-  
հին մենք Էլ հանկարծակի եկանք Եւ  
աևմիջապես փորձեցինք հասկանալ  
մարդամասնությունները: Կապվեցինք  
այստեղի պատասխանատուների հետ,  
որպեսզի կողմնորոշվենք Եւ համապա-  
տասխան որոշումներ կայացնենք: Անմի-  
ջապես գրություններով դիմեցինք պատ-  
կան Եվրոպական կազմակերպություն-  
ներին, նաեւ Եվրոպական խորհրդարա-  
սի՝ Հայաստանի հետ բարեկամական  
խմբին, տարբեր պատվիրակություննե-  
րի, մեր շրջանային Հայ Դատի հանձ-  
նախմբերին: Ստանալով Երեւանի կենտ-

որոնական գրասելյալի կողմից ուղղություններ՝ անհրաժեշտ եր համադրված կերպով աշխատանքներ կազմակերպել, թե՛ անձնական հանդիպումների, թե՛ գրությունների միջոցով փաստել, որ Աղբեջանը է Նախահարձակը:

Աշխատանքներ տարվեցին, որպեսզի այդ մասին խոսակցություն լինի Եվոպական Միության լիազումար Նիստում, եկ մենք Ստրազբուրության այցելեցինք՝ համադրելով Հայաստանի դեսպանի հետ մեր աշխատանքները:

Եվրոպայի Յայ Դատի գրասենյակի շաբթերով կատարվեցին բազմաթիվ հանդիպումներ, որոնց ընթացքում, եթե ոչ բոլորը, ապա մեծ մասը քննադատեցին Աղրբեջանին՝ որպես Նախահարձակ կողմի: Որոշ պատգամավորներ խոսեցին Արցախի ժողովորի ինքնորոշման իրավունքի մասին, Աղրբեջանի կողմից իրականացված անմարդկային արարութիրի մասին, եւ ընդիանրապես Աղրբեջանը քննադատող ելույթներ եղան:

ՍԵՐ հիմնական շանքերն այն ուղղությամբ են, որ շարունակենք պնդել, որ Աղրբեջանը չի կարող պատերազմի ճանապարհով լուծել Կրցախի հարցը եւ նաեւ փաստենք, որ Աղրբեջանը ձախողվեց: Այս, Աղրբեջանը գրավեց մի քանի ռազմավարական Նշանակության դիրքեր, բայց նրա հիմնական նպատակը ձախողվեց, քանի որ ԼՂՀ ՊԲ-ն կարողացավ արժանի հակահարված տալ:

ՄԵԾ ՎԱՆԱՆԵՐ ԿԿՐԻ Աղրբեշանը, հՆԱՐԱ-  
ՎՈՐ Ե՝ ԴԱՊԱՐԻ ԳՈյՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ, ԵՒ  
ԴԱ ԿԱՐՈՂ Է ԱԳԳԵԼ ՈՅ ՄԻՋԱՆ ԱՄԲՈՂ  
ՏԱՐԱԾԱՀՐՁԱՆԻ ՎԻՐԱ, ԱՋԵՆ՝ ԸՆԴԻԱՆՈՒՐ  
ԻՐԱՎՈՒԴԱԿ ԿԱՐՈՂ Է ՎԻԽԵԼ ԱՉԽԱՐԻՈՒՄ:

ՆԿԱՄԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԹՈՒՐՔԻԱՀ ԱՐԼԿԱ-  
ԾԱԽՍՆԴԻՐ ՔԱԴԱՐՁԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԵՏՈՔ Է  
ՆՇԵԼ, ՈՐ ԱՅՍ ՄԻՋԱԿ ԵՐԿԻՐՆ Է, ՈՐ ՔԱԶԱԼԵ-  
ՐԵՑ ԱՐԵԼԻՆ՝ ՄԻԽԵԼ ՎԵՐՈ ՀԱՐՈՒՆԱԿԵԼ

պատերազմը: Եթե պատերազմը շարունակվեր, Թուրքիայի նպատակը, անշուշտ, ոչ միայն Ղարաբաղն էր, այլև՝ Հայաստանը: Այդ պարագայում էլ խաղաղաշտ պետք է իջներ Ռուսաստանը՝ հաշվի առնելով ռազմական գործընկերոց ստանձնած պարտականությունները: Եթե իրավիճակը հասնի դրան, այդ դեպքում արդեն Եվրոպան չի կարող անմասն մնալ: Այս ամենը մենք փորձեցինք բացատրել Եվրոպացի պաշտոնյաներին, քաղաքական եւ հասարակական գործիքներին, եւ կարծես թե նրանք ընկալեցին պահի լրջությունը:

Ինչ վերաբերում է մեր աշխատանքնե-

Ելնելով, պետք է բանակցել եւ համաձայնություններ առաջ քաշել:

- Արցախյան քառօրյա պատերազմի ընթացքում Ադրբեյջանի կողմից իրագործվել են մի շարք պատերազմական ոճրագործություններ: Այդ ձեռագիրը ոչնչող չի տարբերվում ԻՊ-ի ձեռագրից: Ի՞նչ է արվում ՀՅԴ Եվրոպայի Դայ Դատի գրասենյակի կողմից՝ Եվրոպական բարձր առյաններում այս հարցը բարձրացնելու ուղղությամբ:

- Այդ ամենը տարածվեց իրենց՝ աղբեջանցիների կողմից, որովհետեւ հենց իրենք սկսեցին ամեն տեղ հրապարակել իրենց «քաջազրությունները»։ Մայիսին, երբ այստեղ էին Պետոն Դեմիրճյանի եկ Աշխեն Ֆիքսովայի հետ, հանդիպեցինք ԼՂՀ ՄիՊ Ոուրեն ՍԵլիքյանի հետ եւ հրավիրեցինք Բյոյուսել, որպեսզի նա անձամբ Ներկայացնի հարցը։ Մենք, անշուշտ, Ներկայացրել էինք, սակայն, հաշվի առնելով, որ մենք մասնագետ չենք, անհրաժեշտ համարեցինք մասնագիտորեն Ներկայացնել հարցը։ Ոու-

ਪੰਜਾਬ

- Աղբեցանը հրաժարվում է սահմանային միջադեպերի հետաքննման մեխանիզմներ կիրառելուց: Որոշ քաղաքագութեակի կարծիքով՝ մոտակա տարիներին դա գրեթե անհնար է հրականացնել: Արդյո՞ք հնարավոր է որեւէ կերպ ազդել Աղբեցանի վրա՝ ստիպելով Նրան գևալ այլ քայլին:

- Յարցն ավելի խորքային է, եւ Նման մեխանիզմների կիրառում ինքնին հարցի լուծում չէ: Պարզապես պիտի ստեղծվեն հարմար պայմաններ, որպեսզի ինարավոր լինի երկխոսություն ծավալել կողմերի միջեւ: Զարօյյա պատերազմի ընթացքում երկու կողմից այսքան զոհեր ունենալուց հետո հարցի լուծումն ավելի խորքային է դարձել (չնայած՝ չեմ կարծում, որ Ալիեւը մտահոգված է իր կողմի զոհերով և ավելի շատ մտահոգված է, թե որքան գումար կարող է մտնել իր կող գրավանք): Մեզ համար մարդկային կորուստներն աղետալի նշանակություն ունեն: Այս պայմաններից ելենով՝ չգիտեմ, թե սահմանային միջադեպերը հտաքննող մեխանիզմների կիրառումը որքանով կարող է նպաստել հարցի լուծմանը: Աղբեքանը չի հարգում իր իսկ համաձայնությունները: Ինչի՞ մասին կարող է խոսք լինել, եթե բանակցելուց մի քանի րոպե հետո նորից զոհ ենք ունենում Արցախի սահմանին:

Սխալ հասկացողություն կա Արցախի հարցի Եռթյան վերաբերյալ։ Ծատերի կարծիքով՝ դա միայն հողային հարց է, եւ Աղրբեջանը իր քարոզությունն այդպես է կառուցել տարիներ շարունակ։ Մենք բոլորս, իբրև հայ ժողովուրդ, տարիներով թերացել ենք մեր գործում։ Մտածել ենք, որ պատերազմում հաղթելով հարցը վերացրինք, սակայն դա այդպես չէր։ Տարիներով մենք չենք զբաղվել մեր հարցերով, եւ երբ Աղրբեջանը փող ունեցավ եւ անցավ հարձակման՝ մենք արթնացանք, հետքայլ արեցինք՝ մնալով պաշտպանողական դիրքում։ Եվրոպայի Յայ Դատի հանձնախումբը շատ կարծր աշխատանք է տարել վերջին 6-7 տարիների ընթացքում, որպեսզի այս պատերով փոխվի։ Ինչ վերաբերում է Եվրոպական Խորհրդարանին, ապա դա մեզ հաջողվեց։ Նովյան չէ պատկերը Եկեղեց-ում, ուր պայմաններն ամբողջությամբ տարբեր են։ Ունենք լուրջ հարցեր, սակայն այդ ուղղությամբ եւս աշխատում ենք Ստրազբուրգում Յայաստանի պատվիրակության հետ, քանզի այսօր այստեղ հավասարակշռությունը մեր դեմ է։

Եվրոպայի Յայ Դատի գրասենյակը  
առանձին անձերի հետ հանդիպումների  
ժամանակ կարողացել է համոզել, որ Վր-  
ցախի հարցը հողային հարց չէ, այլ Վր-  
ցախի ժողովրդի կյանքի եւ մահվան  
հարց. այստեղ հարցը մարդկային է: Վր-  
ցախում 150000 կյանք կա, ովքեր հա-  
զարավոր տարիներ այստեղ են ապրել,  
Նրանց տունն այստեղ է, ընտանիքն այս-  
տեղ է, ապագան՝ այստեղ: Ինչպես՞ եք  
կարծում՝ սա Յայաստանի եւ Աղոքեցա-  
նի միջեւ հողային հարց է, թե՛ 150000  
մարդու կյանքի հարց է: Եթե ծեր երկրում  
լիներ նման հարց, դուք ինչպես կանեթք  
նման ապօպաայում:



ոի ուղղությանը, ապա հարկ եմ համարում Նշել՝ քառօրյա պատերազմը չի կարող փոխել մեր ընդհանուր սկզբունքը։ Մեզ համար կարեւորագոյւյն թիրախ է այն հանգամանքը, որ Աղրբեջանը պետք է ընդունի Արցախի մասնակցությունը բանակցություններին։ Մեծագոյն սիսալ եր Արցախին բանակցությունների սեղանից դուրս մղելը՝ անկախ նրանից, թե ինչ ճնշումներ են եղել այն ժամանակ։

Եթե իսկապես ցանկանում են, որ հարցը լուծվի, ապա Արցախը ներկա պիտի լինի այդ համաձայնությունների ընդունմանը:

Սեզ համար հստակ է, որ նախապայմանը պետք է լինի Արցախի ժողովորի ինքնորոշման իրավունքի հարգումը: Եթու միայն թող որոշվի, թե ինչ գիշումների կարող է գնալ Արցախը, եթե այդպի-  
ս

Կինսերը կան:

Դրանից հետո թող շարունակվեն բա-  
նակցությունները, որովհետեւ իրատե-  
ական է առաջ գալու մասին պատճենը:

սական եւ ընդունելի չէ ասել՝ հանձնեցք  
հողերը եւ տեսնեմք,թե հետո ինչ կլինի:  
Կան հարցեր, որոնք պետք է խորու-  
թյամբ ընսկեն, եւ այդ կարգի համաձայ-  
նությունները չեն կարող ընդունվել  
տասնամյակը մեկ: Օրինակ, Մադրիդյան  
սկզբունքները ստորագրվել են 15 տարի  
առաջ, որից հետո շատ բան է փոխվել,  
պայմանները տարբեր են այժմ եւ, ըստ  
այդմ, դրանք չեն կարող իրագործելի լի-  
նեն: Ամեն անգամ, տվյալ իրավիճակից

բեն ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ԲՐՅՈՒՏԵԼ կատարած այցի ընթացքում կազմակերպեցինք Միշարք քաղաքական հանդիպումներ։ Նրան միացավ Յեղինե Եվրիյանը եւ միջանկյալ գեկուց Ներկայացվեց, ուր գրքույկի էր Վերածված հրապարակված լուսանկարները։ Այս ամբողջությամբ Ներկայացնում էր, թէ ինչ Վայրագութառններ են հոգաւայում տերի ունետեն։

Հանդիպումներ եղան մարդու իրավունքներով գրադարձ հասարակական կազմակերպությունների հետ՝ Ներկայացնելով ամբողջ իրականությունը։ Չեմ կարող ասել, որ բոլոր հարթակներում կարողացանք Ներկայացնել հարցը, սակայն մի շաբթ կարենոր աշխատանքներ տարվեցին։

**Լիզբոն 5... հավերժ փառք Նրանց անմոռաց հիշատակին**



*Svētērī hīd nērēgētēlājīn rēlātējālānūp  
aņāzēlēnērētēlāpētēlā mētē hātētēlā uñētētēlānētēlā tētēlā  
lātēlāhētēlāpētēlā añātēlā uñētēlā añētēlāhētēlā*

Դեռևս 1919 թվականին Յայ Եթղափիխական Դաշնակցությունը գաղտնի որոշում է ընդունել իրազործել «Սեմսկի» գործողությունը՝ Յայոց երեսի ոճ րազործերի Նկատմամբ դատավճարը: Եվ ահա, 1921 թվականին Սովորութեա-

լերյանը, Բեռլինում սպանելով Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային, Նեմեսիս սկիզբը դրեց: Այդ պայքարը շարունակվեց հետագայում, եւ չնայած Թեհերյանն արդարացվեց ու համաշխարհային հանրության ուշադրությունը գրավեց, սակայն հայոց ցեղասպանությունը ճանաչում ու դատապարտում չունեցավ, միջազգային ատյանների դռների թակոցը անպատճախան մնաց, իսկ արդարության աղաղակները՝ չլսված:

Եվ ահա, հայ ժողովրդի նորօյա զին-  
յալ պայքարը Վերսկսվեց 1960-ական  
թվականներին՝ ի պաշտպանություն հայ  
ժողովրդի իրավունքների ճանաչման եւ  
արդարության վերականգնման, ասել ե-  
թե՛ Յայ Դատի իրագործման:

Այս վեհ գաղափարների իրագործման ավետողները Եղիշեի «Չիմացյալ մահ մահ է, իմացյալ մահ անմահություն է» սուրբ պատճամը սրտներում դարձան բեյրութահայ 20-22 տարեկան անձնազոհ Երիտասարդներ Վաչե Տաղլեյանը, Սիմոն Յահլիյանը, Սեդրակ Աճեմյանը, Սարգսի Աքրահամյանը եւ Արա Ջրձեյանը: 1983 թվականի հուլիսի 27-ին Նշանակետ ընտրեցին Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում տեղակայված թուրքական դեսպանատունը: Ներս մտելու պահին Նրանց վրա կրակ բացեց պորտուգալացի ոստիկանը, եւ առաջին գործ դարձավ Սիմոնը, սակայն պատասխան կրակ չբացեցին, քանզի Նրանց

«Լիգրոն 5» գործողության մասին շատ է գրվել ու վերլուծվել տարբեր տեսանկյուններից եւ իրարամերժ գնահատականներ տրվել՝ այս կոչվելով ահաբեկչություն, արկածախնդրություն, չհաջողված գործողություն։ Սակայն այսօր Արցախյան զինված ու հաղթանակած պայքարի բարձունքից հետև նաև լուրջ միանգամայն պարզ է դառնում տղաների հերոսական գործողության արդիականությունը եւ զիսյալ պայքարի ճշմար-

տացիությունը: Նրանք իրենց անձնազնի արարովկ ապացուցեցին, որ իրենց նպատակը ամենեւին էլ ահարեկությունը չէ եւ ոչ էլ թուրք սպանելը, այլ իրենց ողջակիզելով՝ Նվիրաբերելը հայոց արդարացի դատին: Նրանք իրենց արարովկ հիշեցրին համաշխարհային հանրությանը, որ Հայոց ցեղասպանության բեռը նաեւ Նրանց ուսերին է, եւ միայն դրանից հետո աշխարհի մի շարք երկրներ ու կառույցներ ճանաչեցին այս: Այդ հանդուզն սիրանըն ուղղված էր հայ երիտասարդությանը, որոնք արդեն սփյուռքի երրորդ սերունդը լինելով, հեռացել էին հայկական արմատներից ու կարծես մոռացել էին մեր դատը: Եւ Վերջապես, այս ուղղված է մեր հայրենիքում ապրող երիտասարդությանը, որոնք ազատագրված ու անկախ հայրենիքի ժառանգորդը լինելով հանդերձ, դժվարությունների տակ կրած երկրի բերին չղիմանալով՝ հաճախ լքում են երկիրը, մինչետք Լիգբրոնի քաշորդիներն անգամ այդ անկախ հայրենիքը չտեսած իրենց ողջակիզեցին «հանուն մեր գոյի», մեր անկախ ու բարեկեցիք ապրելուն, եւ մեզ թողեցին կյանքի ու պայքարի մարտադաշտը: Ահա այս հավերժության անհունությունից պիտի հայ երիտասարդը քաղի իր գաղափարական դասերը:

Հավերժ փառք նրանց անմոռաց հիշատակին:

## Սիրանուշ Սարգսյան

## ՊԵՏԱԿԱՆ ԽԱՐՎԱԾԻՑ ԽԵՏՈ

Ըսթերցողի ուշադրությանն եմ Ներկայացնում 2015 թվականի հունիսի 30-ի ամսաթվով հոդվածի հետևյալ հատվածը, որ խոսում է Թուրքիայի խորհրդարանական ընտրությունների նախօրեին գոյություն ունեցող կացության մասին.

«...Այս բոլորին հետեւում է մի հստակ իրողություն: Թուրքիան գտնվում է քաղաքական մի մեծ տագնապի ոլորտում: Առաջմ ոչ թե՛ծ, բայց և անու զգուշակվող եւ մտահոգիչ՝ Արեւմուտքի համար: Թուրքիայի կայունության խախտումը հիդ է ծանր հետեւանքներով՝ ամբողջ տարածաշրջանի անկայունության վտանգները նկատի առնելով: Եւ, դժբախտաբար, տարածաշրջանը շատ հեռու է այսօր թուրքական անկայունության հետեւանքները դիմագրավելու կարողությունից: Նետեւաբար, անհավանական չէ, որ Թուրքիայի վերջին ապավենը, որ բանակն է Եղել Ներկա հանրապետության առաջին օրերից սկսած, կրկին վերահաստատի «Վերջին պահի փրկարարեկ իր դերակատարությունը... Ավելին. լինվին հավանական է, որ Երդողանը ի վերջո իր գրավը դնի այդ մեծ հաշվարկի վրա: Այսօր բանակի վերևախավը Երդողանի գաղափարակիցներն են: Նրանք են, որ կարող են առանց այլեւայլի գիծ քաշել թուրքական շահմատի այս նեղացուցիչ խաղի վրա եւ կարող են մեկ անգամ եւս խաղատախտակը շուրջ տալ...»

Եւ այս մեկը ի վերջո կարող է Արեւ-  
մոլութիւն եւ Ոռւսաստանի վերջնական  
շահերի հետ համահունչ նկատվել եւ  
կայելել մեծապեսական աշխարհի լուր  
աջակցությունը:

«Դեպի ուր Ե դիմում թուրքական  
շախմատը»  
(Ասարքեա իրունիս 30. 2015)

ՂԱՊԱՐԵԳ, հունիսի 30, 2015)

Պետք է և աւել հարց տալ, թե ո՞ր է ի վերջո Երդողանի կարողականությունը Յուսիսային Սիրիայի քրդական ինքան-վարության, Ասադի եւ հսկամական ՊԵ-տության գոյության ինտիրեսը վճռելու մարզում: Պետական հարվածը հաղթահարելուց հետո, ինչպիսի՞ հավակնություններով պիտի գործի Երդողանի վարչակարգը այս երեք կնճռոտ ինտիրեսի հանգուցալուծման մեջ: Նա պիտի կարողանա՞ խաղալ իր Ներքեմալական խաղը Արեւմուտքի եւ Ռուսաստանի միշտել: Պիտի սանձի՞ իր ծավալապաշտամուրժակները Սիրիայում եւ Իրաքում կամ պիտի շարունակի՞ պարենավորել:

տի լինի Թուրքիայի խաղի կանոնները Կովկասում եւ հատկապես Արցախի խնդրի կապակցությամբ: Սրանք այն խնդրներն են, որոնք անխուսափելիորեն գտնվում են գերտերությունների այսօրվա օրակարգում:

Խոլամական Պետության վտանգի դեմ ռուս-ամերիկյան համագործակցությունն կենսական նշանակություն ունի այսօր աշխարհակարգի անվտանգությունն ապահովելու տեսակետից: Երդողանքը ի՞նչ պարտավորություններ եւ ի՞նչ դերակատարություն պետք է ստիպի ստանձնել այս բարդ գործընթացների բովում: Եւ ի՞նչ առավելություններ պետք է փորձի կորզել մեծապետական ուժեղության խաղաղաշտի վրա: Եւ ինչպիսի՞ ողնաշար պետք է կարողանան ցուց տալ զբեմուտքը եւ Ուստատանք երդողանյան մեջ խաղը վսասագերծել կարողանալու համար:

Ուժեղի դասավորումը տարածաշրջանի բեմահարթակի վրա հեշտությամբ փոփոխության չի ենթարկվում: Թուրքիան կարողացել է միևս այժմ «պլատալ» տարածաշրջանի վտանգներից եւ իր հարցերը դիմել մեծապեսությունների ուսին ու իր մեջբերը թաղել նրանց հակասական շահերի տիղմում: Այսօրվա դեպքերը մեկ անգամ եւս հստակեցրեց, որ Երդողանի քաղաքական ուժի իսկական խարիսխը երկրի ժողովորական մեծ զանգվածն է՝ կրոնի հողի վրա քաղաքականացած: Արեւմուտքն ու Շուսաստանն արդյո՞ք կարող են խիզախությամբ դիմագրավել Թուրքիայի ներքին ճակատի այս սպառնալիքին, որն ի վերջո Երդողանի վարչակարգի մեծագույն գենըն է իրենց դեմ:

Կարո Արմենյան  
Յուլիսի 15, 2016  
Վաշինգտոն



## Վիճուկն Արցախում



Ովեր լսած չեն վիճունի մասին, հավանաբար կիետաքրքրվեն, թե ինչ է նշանակում ջինական այս տերմինը: Բառացի «Վիճուն» նշանակում է «հավերժ գարուն», միևնույն գեղեցիկ անվանման տակ թաքնվում է հզոր մարտական արվեստ: Վիճունը ջինական մարտարվեստ է Եւ դասվում է ուշուի բազմաթիվ ոճերի շարքին: Այս ձեւափորվել է 17-րդ դարի վերջերին Եւ հետագա զարգացում է ստացել՝ շնորհիկ ջինացի վարպետ Իվ Սանի Եւ Նրա հանրահայտ աշակերտ Բրյուս Լիի: 70-ական թվականների վերջերին այս ոճը գրավեց Եվրոպան: Գերմանիայում մարտարվեստի ամենահանրահայտ ոճը վիճունն է: Ուստանանում այս ոճը հայտնվեց 70-ականներին: Փոխանցվելով սերնդեսերունդ Եւ տարածվելով աշխարհի տարբեր կենտրոնում վիճունը թափանցեց Նաեւ Յայաստան Եւ Արցախ: Ականձ 2009 թվականից՝ այս դասավանդվում է Արցախում՝ Երիտասարդ Եւ հմտւ մարզի Սայաթ Բարդասարյանի կողմից, Եւ հասանելի է Արցախի մարտական արվեստների սիրահաններին, ում համար կարեւոր են սեփական ինարավորությունների բացահայտումը, կամքի ու մտքի դրսեւորումը, մարտարվեստի միջոցով ինքնակատարելագործումը:

Ոճի առանձնահատկություններն ու նրբությունները պարզաբանեցինք ուշու մարտարվեստի փորձառու մարզչի հետ:

- Սայա՞թ, կարո՞ղ եք մեկնաբա  
իրենից Ներկայացնում վիճունը:

- Սարտարքեստի յուրաքանչյուր ոճ ու սումսամիբելու եւ հաւաքանալու համար նախ պետք է անդրադառնալ տվյալ ոճի ակունքներին, այսինքն՝ իմասնալ նրա

ժագման ու պատմության սկզբնաղբյուր Ների մասին։ Մեր օրերում հժվար է դատել, թե գոյություն ունեցող առասպելներից որն է Վիշնունի իրական հիմքը հաւդիսանում։ Յայտնի է, որ այն ճեւազորվել է շատ ավելի ուշ, քան ուշուի ընդհանուր համակարգը։ Այն իր մեջ ամփոփում է վաղուց հայտնի ուշուի հիմք ուղղությունների համադրությունը։ Զինական պատմությունը հարուստ է դրվագներով, որտեղ, բազմից հարձակումների ենթարկվելով իրենց թշնամիների կողմից, չինացիները ստիպված եին դիմակայել՝ օգտագործելով սերնետերունդ փոխանցված մարտական արվեստը։ Սակայն հաճախ գոյություն ունեցող հնարները բավարար չեն հաղթանակի հասնելու համար։ հնարամիտ չինացիները ստիպված եին պաշտպանության նոր հնարներ մտածել՝ այդպիսով ստեղծելով նոր ոճեր։ Մշակելով նոր ավանդույթներ։ Ահա մի օրհասական պահի էլ հարկ եղավ մշակելու թշնամուց պաշտպանվելու այնպիսի արդյունավետ համակարգ, որին տիրապետելու համար չպահանջվեին երկար տարիներ կամ մի ամբողջ կյանք, մեծ տարածություն եւ հոգնեցուցիչ մարզումներ, եւ որը կկարողանային օգտագործել ոչ միայն Ֆիգիկական գերազանց վիճակ ունեցող զինվորները, այլ նաև հասարակ մարդիկ՝ անկախ սեռից։ Վիշնունի ստեղծման նախաձեռնությունը Վերագրվում է Շաոլինյան վանքի միանձնուի Նրգ Մուտեին, որը վեռունշյալ հինգ ոճերի եւ իր կողմից մշակված նոր շարժումների համադրությունից արարել եւ իր հայրենակիցներին է փոխանցել ինքսապաշտպանության այս արդյունավետ ոճը։

- Իսկ պահպանվու՞մ են արդյոք շատ-լինյան ոգին եւ ավանդույթները ժամանակակից վիճակնի համակարգում:

- Ժամանակակից փինչուն իր մեջ պարունակում է չինական մարտարվեստի գենոտիպը, որը պահպանվել է դարերի ընթացքում: Փինչունի ներքին պոտենցիալի յուրատիպությունն ու անսովոր հզորությունը պայմանավորված է կրանով, որ այս երկար ժամանակ գաղտնի էր մոռւմ եւ գերծ էր այլ մարտարվեստների ազդեցությունից, հետեւապես աղավաղումներ գրեթե չկային: Ըստհանրապես ուշուղ ուղղությունները կարելի եւ բաժանել ներքին եւ արտաքին խմբերի, մինչդեռ յուրաքանչյուր ներքին ոճի մեջ կան արտաքին, իսկ արտաքին ոճի մեջ՝ ներքին տարրեր: Լինելով հզոր ինքնապաշտպանության միջոց՝ փինչունն իր մեջ ամփոփում է Ե՛ւ կոպիտ, Ե՛ւ փափուկ ինարներ: Փինչունին ընորոշ է ինչպես ուժային մաս, այսպես էլ

շարժումների մեղմություն ու սահունություն, կենտրոնավայրու ունակություն, շարժման արագացում եւ դասդադեցում: Երկար հարվածները զուգորդվում են կարճերով, փափկությունը փոխարինվում է ուժընթացքամբ եւ այլն:

- Ինչո՞ւ է տարբերվում վիսչունն այլ մարտարվեստներից:

- Վիշնունում պաշտպանությունը չի կատարվում ուժի միջոցով (ինչպես օրինակ կարատեռում), չկան ոտքի բարձր հարվածներ (ինչպես թերզվանդոյում) ու ճեղքի կլոր հարվածներ (ինչպես բռնսում) եւ գրեթե չկան ըմբշամարտի հնարիներ (ինչպես ծյուդոյում եւ այկիդոյում): Վիշնունում մարտի ժամանակ օգտագործվում են միաժամանակ եւ՝ ճեղք, եւ՝ ոտք, այս էլ հնարավորինս կարծ հեռավորության վրա: Վիշնուն առանձնանում է նաեւ չի-սառ մասով (թարգմանաբար նշանակում է «կպչուն ճեղքեր»): Դրա եռթյունը կայանում է նրանում, որ վիշնունիստը սկսում է զգալ եւ կանխատեսել հակառակորդի շարժումները նրան հպվելու միջոցով եւ կարողանում է պաշտպանությունից ակնթարթորեն անցնել հարձակման՝ կասեցնելով հարձակվողի շարժումները: Դա կաշկանդվածությունն եւ անհարմարությունն է առաջացնում հակառակորդի մոտ, ով ստվոր է միայն խփել եւ ստվոր չէ նրան, որ հարվածը կարող է խրվել պաշտպանության մեջ: Վիշնունում չկան գոտի եւ աստիճան, կան կարգեր: Այստեղ կարեւոր է արվեստին տիրապետելու մակարդակը:

- Ինըներդ տիրապետելով վիճունի հետաքրքրաշարժ հնարևներին եւ լինելով մարզի՝ ի՞նչ կասեր այս մասին, որ որոշ աղբյուրներում հանդիպում ենք, թէ վիճունի ի սկզբան համարվել է կանացի ոճ:

- Յնարավոր է դա պայմանավորված Ենրանով, որ ինչպես Նշվեց, վիճունուի համակարգն ամբողջությամբ ծետավորվել ու մշակվել է կլոչ կողմից: Յայտնի է նաև, որ Նրա առաջին աշակերտը Նովյայես Վանքի Միանձնութիւներից Մեկն է եղել, ու Անունով էլ կոչվել է այս արվեստը: Մինչդեռ համարել, որ այն պարունակում է այնպիսի մեթոդիկա, որը Նախատեսված է զուտ կանանց կամ աղջկերի համար՝ միանշանակ օբյեկտիվ չըր լինի: Վիճունը կարող են յուրացնել տարբեր կառուցվածքի եւ հնարավորությունների տեր մարդիկ: Այս հարմար է բոլորին: Յանկացած մարդու կյանքում կան կենսական դժվարություններ, որոնց բեռն անընդհատ ճնշում է՝ առաջացնելով հոգեբանական կոսֆիլիկուներ: Վիճունը թույլ է տալիս հեշտությամբ ազատվել բարդություններից,

պարզաբանել կյանքի լուսավոր կողմերը եւ օգտագործել դրանք ինքնակատարելագործման հասնելու համար։ Վյո պահից սկսած փոխվում է Մարդու աշխարհայացքը, գործում է գիտակցված ինքնահսկումը։ Մարդու հասնում է կատարելության՝ պահպանելով բարոյական և Մտավոր բոլոր սկզբունքները։ Զգտել կատարելության սա է մարտարվեստի հիմնական գաղափարը, իսկ դրան հասնելու համար մարդու սեռը նշանակություն չունի։

- Վինչունը յուրացնելու համար ի՞նչ հատկություններ պետք է զարգացած լինեն մարդու մեջ:

- Վկնչումի մեղողիկան առաջին հերթին հարմար է երիտասարդ եւ հասուն տարիքի մարդկանց համար, որոնց համար կարեւոր են սեփական հնարավորությունների վերհանումն ու կիրառումը: Այն դասավանդվում է նաեւ որպես ինքնապաշտպանություն: Նախ՝ կարեւոր է ուժեղ մարտական ոգի ունենալ, որի միջոցով յուրացվում են արվեստի ներքին եռթյունն ու սկզբունքները: Մեծ նշանակություն ունի մարմահի կոփումը, կեցվածքների ճիշտ տիրապետումը: Դրա համար ուշադրություն է դարձվում ֆիզիկական եւ հոգեբանական վարժություններին, որոնց միջոցով մարզիկի մեջ զարգանում են այնպիսի կարեւոր հատկություններ, ինչպիսիք են տոկունությունը, դիմացկունությունը, կամքը: Մեծ ներ է խաղում նաեւ մարտական տեխնիկայի յուրացումը, այնուհետեւ տեխնիկայի կատարման արագությունը: Մարզվածը պետք է լինի հոգեպես հանգիստ եւ ներդաշնակ, ազնիվ ու բարի: Ահանց դրանց չի կարելի հասնել հաջողության:

- Հետաքրքիր է, թե ինչպես են ընթանում վիճունի պարապմունքները: Արդյո՞ք արցախիները և ախապատվություն են տալիս չինական մարտարվեստի այս ոճին:

- Արցախիները միշտ եղել ու Ներկայումս ել խիզախ են, մարտնչող եւ արդար: Դա համապատասխանում է հին չինական վարպետներից մեզ փոխանցված արվեստի սկզբունքներին: Այո՛, ունենք մարգիկներ, ընդ որում՝ տղաներ եւ աղջիկներ, ովքր և աղջիկները եւ տալիս հենց այս ոճին: Պարապմունքներն ընթանում են շաբաթական երեք անգամ, բայց առայժմ կրում են սիրողական բնույթ: Նպատակ ունենք առաջիկա ժամանակահատվածում պարապմունքները խմբային դարձնել՝ ուշովի վիճուն ոճն Արցախում տարածելու, զարգացնելու եւ մասնագիտացնելու համար:

Արցախում մեկնարկել է Դաշնակցության ճամբարները



Վորություն կունեսան աղցախցի  
մին 1000 պատրակիելո:

Մինչ 1000 պատճենները:  
2009 թվականից պատճենեկան ճամբարներ կազմակերպելու նպատակով ՀՅԴ Ամերիկայի Արեւմտյան ափի Երիտասարդական եւ ուսանողական միություններից տասնյակ երիտասարդներ այցելում են Արցախ եւ տարբեր համայնքներում երեխաների համար Երկշաբաթյան վճարում:

Արդեն ավարտին է հասել ՀՅԴ  
Ամերիկայի Արեւմտյան ափի Երի-  
տասարդական միության առաջին  
ճամբարը Ասկերանում, Մեկսարկել  
է ՀՅԴ Լիբանանի ԶՈՄ ճամբարը  
որորում: Աշխենում սպասվում են ՀՅԴ  
և Ասիայի Երիտասարդական միության  
քարար Մարտունիուս, ՀՅԴ Ամերիկա-  
յի Արեւմտյան ափի Երիտասարդական

միության երկրորդ ճամբարը Շուշիում եւ Ֆրանսիայի «Նոր Սերունդ» երիտասարդական միության ճամբարը Ստեփանակերպում:

Պատասխան ճամբարների 9-16 տարեկան մասնակիցները երկշաբաթյա ճամբարների ընթացքում շփում են սփյուռքից ժամանած երիտասարդների հետ, ովքեր տարբեր խմբակների միջնորդ կ հրենա գիտելիքներն են փոխանցում աղօախցի պատասխաներին:

Δωμέραρηνερηρ կազմակերպելու համար բոլոր երկրների դաշնակցական երիտասարդները տարվա կտրվածքով իրականացնում են տարբեր դրամահափառ միջոցառումներ հայկական գաղթօջախներում: Ճամբարների կազմակերպումն Արցախում եւ առհասարակ հայրենիքում իրենց դրական ազդեցությունն են ունենում ոչ միայն տեղի երիտասարդների եւ պատանիների համար, այլ այդ ամբողջ ծեռակրկ ոչ պակաս դեր ու նշանակություն է ունենում սփյուռքահայ երիտասարդների համար. Լորանցից շատերը հայրենիք ոտք են դնում առաջին անգամ: Օրինակ, 2009 թվականին Արցախում առաջին անգամ կազմակերպած ճամբարի դեկապարներից ումանք կարծ ժամանակ անց Վերադարձել են հայրենիք՝ Մշտական քնակության: Եւ այս ուսաբեռն եղանի էն:

«ԱՊԱՌԱԺ»

